**Unofficial translation / traduction inofficielle**

Հանրամատչելի

Greco RC-III (2014) 26E

Ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 12-ին

Հրապարակում` 2014 թվականի դեկտեմբերի 16

Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույց

Գնահատման երրորդ փուլ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴ ԶԵԿՈՒՅՑ

**«Քրեականացում (ETS 173 և 191, GPC 2)»**

* * *

«Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն»

Ընդունվել է ԳՐԵԿՈ-ի կողմից` դրա 66-րդ լիագումար նիստում (Ստրասբուրգ, 2014 թվականի դեկտեմբերի 8-ից դեկտեմբերի 12-ը)

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցով գնահատվում են Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցն ընդունելուց հետո Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցները՝ ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի վերաբերյալ Գնահատման երրորդ փուլի զեկույցում ներկայացված առաջարկությունների ուղղությամբ, որոնք ընդգրկում են երկու հստակ թեմաներ. դրանք են՝

   **Թեմա I. Քրեականացում.** «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի (ETS 173) 1ա եւ 1բ հոդվածները, 2-12-րդ, 15-17-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, դրան կից՝ Լրացուցիչ արձանագրության (ETS 191) 1-6-րդ հոդվածները եւ 2-րդ ղեկավար սկզբունքը (կոռուպցիայի քրեականացում).

   **Թեմա II. Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն.** Կուսակցությունների եւ նախընտրական քարոզչության ֆինանսավորման հարցում կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր կանոնների վերաբերյալ առաջարկության (Rec(2003)4) 8-րդ, 11-րդ, 12-րդ, 13բ, 14-րդ ու 16-րդ հոդվածները եւ, ավելի ընդհանուր իմաստով՝ 15-րդ ղեկավար սկզբունքը (կուսակցությունների եւ նախընտրական քարոզարշավների ֆինանսավորում):

2. Գնահատման երրորդ փուլի վերաբերյալ զեկույցը ԳՐԵԿՈ-ի կողմից ընդունվել է դրա 49-րդ լիագումար նիստում (2010 թվականի դեկտեմբերի 3) եւ հրապարակվել է 2011 թվականի ապրիլի 11-ին՝ Հայաստանի թույլտվությունն ստանալուց հետո (Greco Eval III Rep (2010) 4E [Գրեկոյի գնահատման III զեկույց (2010)4E], Թեմա I եւ Թեմա II): Պարտավորությունների կատարման վերաբերյալ հաջորդ զեկույցն ընդունվել է ԳՐԵԿՈ-ի 58-րդ լիագումար նիստում (2012 թվականի դեկտեմբերի 7) եւ հրապարակվել է Հայաստանի թույլտվությունն ստանալուց հետո՝ 2012 թվականի դեկտեմբերի 17-ին:

3. Ինչպես պահանջվում է ԳՐԵԿՈ-ի ընթացակարգային կանոններով, Հայաստանի իշխանությունները ներկայացրել են առաջարկությունների իրականացման նպատակով ձեռնարկված միջոցների վերաբերյալ իրավիճակը նկարագրող զեկույց: Այդ զեկույցն ստացվել է 2014 թվականի հունիսի 13-ին եւ հիմք է ծառայել Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի համար:

4. Պարտավորությունների կատարման ընթացակարգի առնչությամբ համազեկուցողներ նշանակելու համար ԳՐԵԿՈ-ի կողմից ընտրվել են Ռումինիան եւ Հունաստանը: Որպես համազեկուցողներ նշանակվել են՝ Ռումինիայի կողմից՝ Արդարադատության նախարարության Հանցագործությունների կանխարգելման եւ ակտիվների վերականգնման ազգային գրասենյակի ղեկավար Քորնել Վիրգիլյու ԿԱԼԻՆԵՍԿՈՒՆ եւ Հունաստանի կողմից՝ Սերեսի շրջանային դատարանի նախագահող դատավոր, Սերեսի առաջին ատյանի դատարանի նախագահ Դիմոսթենիս ՍՏԻՆԳԱՍԸ: Պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի մշակման աշխատանքներում նրանց աջակցում էր ԳՐԵԿՈ-ի քարտուղարությունը:

## II. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### Թեմա I. Քրեականացում

5. Նշվում է, որ ԳՐԵԿՈ-ն իր Գնահատման զեկույցում I Թեմայի վերաբերյալ ներկայացրել է Հայաստանին ուղղված 8 առաջարկություն: Պարտավորությունների կատարման հաջորդ զեկույցում ԳՐԵԿՈ-ն եզրակացրել է, որ (i)-(vi) եւ (viii) առաջարկությունների իրականացումը գնահատվում է բավարար: (vii) առաջարկության առնչությամբ, որը համարվում է մասամբ իրականացված, խոսվում է ստորեւ.

**Առաջարկություն (vii)**

6. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է. i) վերլուծել Քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածը (4-րդ պարբերություն), $312^1$ հոդվածը (4–րդ պարբերություն) եւ 200-րդ հոդվածը (5–րդ պարբերություն) եւ*

*համապատասխանաբար վերանայել պատժից մեխանիկորեն (եւ ընդհանուր պարտադիր) ազատումը, որը կիրառվում է գործուն զղջալու դեպքում եւ, ցանկացած դեպքում, ii) պարզաբանել այն պայմանները, որոնց դեպքում կարող է վկայակոչվել գործուն զղջալու պաշտպանության միջոցը:*

7. ԳՐԵԿՈ-ն հիշատակում է, որ Պարտավորությունների կատարման զեկույցում այս առաջարկությունը համարվում է մասամբ իրականացված, քանի որ ձեռնարկված օրենսդրական միջոցառումները բավարար չեն եղել, ինչպես նաեւ միասնական չեն եղել Քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի (5–րդ պարբերություն), 312-րդ հոդվածի (4-րդ պարբերություն), $312^1$ հոդվածի (4–րդ պարբերություն) մասով: Ավելին, ԳՐԵԿՈ-ն ողջունեց գործուն զղջալու պաշտպանության միջոցը վկայակոչելու սեղմ ժամկետի ներմուծումը՝ որպես այս գործիքի չարաշահման դեմ պայքարի երաշխիք:

8. Իշխանություններն այժմ հայտնում են, որ սույն առաջարկության հետ ամբողջական համապատասխանությունն ապահովելու համար Քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի (5-րդ պարբերություն), 312-րդ հոդվածի (4-րդ պարբերություն) եւ $312^1$ (4-րդ պարբերություն) հոդվածի ձեւակերպումները համապատասխանեցվել են խորհրդարանի կողմից 2014 թվականի մայիսի 16-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքով (ՀՕ-14-Ն): Նոր օրենսդրությունը ներկայացվել է ԳՐԵԿՈ-ին:

9. ԳՐԵԿՈ–ն գնահատել է լրամշակված օրենսդրությունը Գնահատման զեկույցում (75-րդ, 89-րդ եւ 90-րդ պարբերություն) թվարկված եւ վերլուծված թերությունների լույսի ներքո: Ուստի, դրանում նշվում է, որ այդ ժամանակ ԳՐԵԿՈ-ի կողմից ընդգծվել են մի շարք թերություններ, մասնավորապես այն մասին, որ չկար ընդհանուր պահանջ զեկույցի ներկայացման կամավոր բնույթի մասին, չկար զեկույցն իրավապահ մարմիններին ներկայացնելու համար սահմանված կոնկրետ ժամկետ, ինչպես նաեւ այն, որ առեւտրային կաշառքի առումով կաշառք տվողը,

ինչպես նաեւ կաշառք վերցնողը կարող էին օգտվել պաշտպանությունից նույնիսկ առանց շորթման հանցանշանի առկայության: Ամենավերջին փոփոխություններից հետո, ԳՐԵԿՈ-ն նշում է, որ առաջարկության մեջ նշված բոլոր երեք համապատասխան հոդվածները ներկայումս համապատասխանեցվել են, որ օրենքը թույլ է տալիս գործուն զղջալու պաշտպանության միջոցի կիրառման հնարավորությունը միայն ակտիվ կաշառքի դեպքում, որ կաշառքը բոլոր դեպքերում պետք է կապված լինի շորթման պայմանների հետ, որ կաշառք տվողն այժմ պարտավոր է հայտնել հանցագործության մասին՝ նախքան դրա մասին իրավապահ մարմիններին հայտնի դառնալը, եւ որ նման հաղորդումը պետք է ներկայացվի հանցագործությունը կատարելու օրվանից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում: Այստեղից հետեւում է, որ Հայաստանի իշխանությունները վերլուծել, վերանայել եւ հստակեցրել են գործուն զղջալու պաշտպանության վերաբերյալ համապատասխան իրավական դրույթները, եւ որ մի շարք սահմանափակումներ են ներմուծվել այս գործիքի չարաշահման դեպքերից խուսափելու համար, եւ որ գործող դրույթները դարձել են միասնական:

10. <u>ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ (vii) առաջարկությունն իրականացվել է բավարար չափով:</u>

**<u>Թեմա II. «Կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկություն»</u>**

11. Հարկ է նշել, որ ԳՐԵԿՈ-ն իր Գնահատման զեկույցում II Թեմայի առնչությամբ Հայաստանին ներկայացրել է 11 առաջարկություն: Պարտավորությունների կատարման հաջորդ հաշվետվության մեջ ԳՐԵԿՈ-ն եզրակացրել է, որ (i)-(vii) եւ (x) առաջարկությունների իրականացումը գնահատվում է բավարար: (viii) եւ (xi) առաջարկությունները, որոնք համարվում են մասամբ իրականացված, ներկայացված են ստորեւ:

**Առաջարկություն (viii)**

12. *ԳՐԵԿՈ-ն առաջարկել է ապահովել կուսակցությունների եւ նախընտրական քարոզարշավների ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության համար անկախ եւ միասնական գործող մեխանիզմ, որին կտրվեն իրավասություն, լիազորություն, ինչպես նաեւ ֆինանսական եւ կադրային ռեսուրսներ՝ այդ ֆինանսավորումն արդյունավետորեն եւ ակտիվորեն վերահսկելու, քաղաքական ֆինանսավորման կանոնակարգերի ենթադրյալ իրավախախտումների գործերով քննություն իրականացնելու եւ, անհրաժեշտության դեպքում՝ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:*

13. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ այս առաջարկությունը Պարտավորությունների կատարման զեկույցում համարվում է մասամբ իրականացված: Թեեւ ընդունվում է, որ իշխանությունների կողմից ձեռնարկվել են մի քանի միջոցառումներ, ինչպիսիք են՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նոր անկուսակցական կազմի ստեղծումը՝ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասությամբ, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծումը՝ որպես մշտական մարմին՝ կուսակցությունների եւ նախընտրական քարոզարշավների ֆինանսավորումը վերահսկելու իրավասությամբ, ԳՐԵԿՈ-ն նաեւ նշում է, որ միջոցառումները չեն հասցեագրել Գնահատման զեկույցում (71-րդ պարբերություն) ընդգծված բոլոր թերությունները: Մասնավորապես, ԳՐԵԿՈ-ն կասկածի տակ է դնում կուսակցությունների կապակցությամբ աուդիտորների անկախությունը եւ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից հանգամանալից վերահսկողությունը. այն կոչ է անում ստեղծել արդար հավասարակշռություն քաղաքական ֆինանսավորման նկատմամբ արագ եւ հանգամանալից վերահսկողության միջեւ:

14. Հայաստանի իշխանությունները այժմ հայտնում են, որ 2014 թվականի մայիսի 16-ին Ազգային ժողովն ընդունել է «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի Ընտրական օրենսգիրքը փոփոխելու մասին» օրենքը: Այս նոր օրենքի (ՀՕ-15-Ն) արդյունքում, Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ

մասը լրացվել է նոր նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ՝ *«Սույն մասում նշված սուբյեկտների վերահսկողական իրավասությունը չի տարածվում իրենց նշանակած խմբակցությունների մուծումների, դրանց հաշվարկման եւ ծախսերի վրա»*:

15. Ավելին, <u>իշխանությունները</u> վերահաստատում են, որ քաղաքական ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության մեխանիզմի անկախությունն ապահովելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 54-Ն որոշմամբ ստեղծվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, եւ սահմանվել է դրա գործունեության կարգը: Իշխանությունները շեշտում են, որ այս Ծառայությունն ունի նման ֆինանսավորման նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական եւ մարդկային ռեսուրսները (Ղեկավարը եւ երկու քաղաքացիական ծառայողներ եւ ընտրությունների ժամանակ, անհրաժեշտության դեպքում, կարող են ընդգրկվել մինչեւ հինգ պայմանագրային աշխատողներ՝ մեկ ամիս ժամկետով): Նրանք նաեւ վերահաստատում են, որ լրացնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը 223.2 հոդվածով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելիս, իրավասու է կիրառելու պատասխանատվության միջոցներ:

16. <u>ԳՐԵԿՕ</u>-ն նշում է, որ Հայաստանի իշխանությունները Պարտավորությունների կատարման զեկույցի մշակման ժամանակ արդեն մասամբ իրականացրել էին ընթացիկ առաջարկությունը, որ միանգամայն զգալի միջոցներ էին ձեռնարկվել կուսակցությունների եւ նախընտրական քարոզարշավների նկատմամբ վերահսկողության համապատասխան մեխանիզմն ապահովելու համար: Հատկանշական է, որ ԳՐԵԿՕ-ն ողջունում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անկուսակցական կազմը եւ այն

փաստը, որ դրան վերապահվել է վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն: Ավելին, որպես մշտական մարմին Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծումը՝ ընդլայնված կադրային ռեսուրսներով, նույնպես դիտարկվել է որպես բարելավում: Միեւնույն ժամանակ, ԳՐԵԿՈ-ին անհանգստացնում է այն փաստը, որ աշխատանքի մի մասը պետք է իրականացվեր կուսակցությունների կողմից նշանակված աուդիտորների կողմից, քանի որ նրանց չէին բացառել այն կուսակցության հաշիվները ստուգելու համար, որի կողմից նշանակվել էին: Ընտրական օրենսգրքում (28.4 հոդված) այժմ փոփոխություններ են կատարվել ՀՕ-16-Ն օրենքով հետեւյալ խմբագրությամբ՝ *«Սույն մասում նշված աուդիտորների վերահսկողական իրավասությունը չի տարածվում իրենց նշանակած խմբակցությունների մուծումների, դրանց հաշվարկման եւ ծախսերի վրա»*: Հետեւաբար, ԳՐԵԿՈ-ի կողմից Պարտավորությունների կատարման զեկույցում նշված ռիսկն այժմ վերացվել է օրենքում: ԳՐԵԿՈ-ի երկրորդ անհանգստության մասով՝ կապված արագ գործընթացի եւ հանգամանալից վերահսկողության միջեւ պատշաճ հավասարակշռության ապահովման հետ, իշխանությունները շեշտել են, որ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ունի անհրաժեշտ անձնակազմ, ինչպես նաեւ ընտրությունների ժամանակ, անհրաժեշտության դեպքում, մինչեւ մեկ ամիս ժամկետով լրացուցիչ անձնակազմ ներգրավելու հնարավորություն: ԳՐԵԿՈ-ն չի կարող հստակ դիրքորոշում հայտնել գործնականում կիրառված այս նոր համակարգի արդյունավետության վերաբերյալ: Այնուամենայնիվ, այն խրախուսում է Հայաստանի իշխանություններին պարբերաբար վերահսկել համակարգի արդյունավետությունը եւ եզրակացնում է, որ ձեռնարկված միջոցները բավարար հարթակ են ստեղծել Հայաստանում քաղաքական ֆինանսավորումը ներկայիս առաջարկության համապատասխան վերահսկելու համար՝ պայմանով, որ օրենքը կիրառվի օրենսդրությամբ նախատեսված ձեւով:

17. ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ (viii) առաջարկությունն իրականացվել է բավարար ձեւով:

**Առաջարկություն (xi)**

18. *ԳՐԵԿՈ-ի կողմից առաջարկվում է «Կուսակցությունների մասին» օրենքով եւ Ընտրական օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումների մասով երկարաձգել վաղեմության ժամկետը:*

19. Հիշատակվում է, որ ներկայիս առաջարկությունը Պարտավորությունների կատարման զեկույցում համարվում է մասամբ իրականացված՝ անկախ այն փաստից, որ Հայաստանի իշխանությունների կողմից միջոցներ են ձեռնարկվել՝ վարչական պատասխանատվության միջոցներ նշանակելու համար նախատեսվող վաղեմության ժամկետը երկարաձգելու նպատակով: Համապատասխան ժամկետի երկարաձգումը մինչեւ մեկ տարի՝ հաշված իրավախախտումը կատարելու պահից, բավարար չէր ԳՐԵԿՈ-ի չափանիշների լույսի ներքո:

20. Իշխանություններն այժմ վկայակոչում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի մեկ այլ փոփոխություն, որով երկարաձգվում է վաղեմության ժամկետը մինչեւ երկու տարի՝ հաշված իրավախախտումը կատարելու պահից (խորհրդարանի կողմից 2014 թվականի մայիսի 16-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (ՀՕ-15-Ն) ընդունմամբ):

21. ԳՐԵԿՈ-ն նշում է, որ Հայաստանի իշխանություններն այժմ ավելացրել են «Կուսակցությունների մասին» օրենքով եւ Ընտրական օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումների համար նախատեսվող վաղեմության ժամկետը մինչեւ երկու տարի՝ հաշված իրավախախտումը կատարելու պահից: Նման ժամկետը հարաբերականորեն կարճ է՝ ԳՐԵԿՈ-ի մի շարք այլ անդամ պետությունների հետ համեմատած, սակայն այն չի հակասում սահմանված ուղենիշերին: Ձեռնարկված միջոցառումը, ուստի համապատասխանում է առաջարկության նպատակին:

22. <u>ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ (xi) առաջարկությունն իրականացվել է բավարար չափով</u>:

## III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. **Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաեւ Պարտավորությունների կատարման զեկույցի եզրակացությունները՝ ԳՐԵԿՈ-ն եզրակացնում է, որ Հայաստանը ներկայումս կատարել է կամ անդրադարձել է Երրորդ փուլի գնահատման զեկույցում ներառված բոլոր տասնինն առաջարկություններին բավարար մակարդակով**:

24. Ինչ վերաբերում է <u>քրեականացմանը</u>, ապա ԳՐԵԿՈ-ն արդեն ողջունել է Հայաստանի իշխանությունների կողմից Պարտավորությունների կատարման զեկույցի ընդունման ժամանակ ձեռնարկված ջանքերը, Քրեական օրենսգիրքը զգալիորեն լրամշակվել է՝ հասցեագրելու համար Գնահատման զեկույցում ընդգծված ոչ հստակ ձեւակերպումները՝ ներառյալ քրեականացվել է ազդեցությունը շահադիտական նպատակներով օգտագործելը, եւ հանվել է Քրեական իրավունքի կոնվենցիայի 12-րդ հոդվածի մասով Հայաստանի կատարած վերապահումը: ԳՐԵԿՈ-ն նաեւ նշել է Պարտավորությունների կատարման զեկույցում, որ կաշառքի հետ կապված որոշ հանցագործությունների մեկնաբանման ուղղությամբ իրականացվել է համապարփակ վերապատրաստման ծրագիր: Ընթացիկ զեկույցում գնահատվել են լրացուցիչ քայլերը, հատկապես՝ գործուն զղջալու պաշտպանության միջոցի վերաբերյալ համապատասխան իրավական դրույթները վերլուծելու, վերանայելու եւ հստակեցնելու ուղղությամբ: Այս առումով, Հայաստանում ներկայումս գործում են դրույթներ, որոնք հստակ են եւ որոնք զգալիորեն սահմանափակում են նման դրույթների սխալ կիրառման հնարավոր շրջանակը:

25. Ինչ վերաբերում է <u>քաղաքական ֆինանսավորման թափանցիկությանը</u>, ապա այս առումով Հայաստանը նշված առաջարկությունների մեծ մասը արդեն իսկ կատարել էր դեռեւս Համապատասխանության Զեկույցում: «Կուսակցությունների մասին» օրենքում եւ Վարչական

իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխությունների հետմեկտեղ ընդունվել է նոր Ընտրական օրենսգիրք: Կուսակցությունների ֆինանսավորման, ինչպես նաեւ նախընտրական քարոզարշավների առումով թափանցիկությունն ու հաշվետվությունների ներկայացումը բարելավվել է: Նվիրատվություններին վերաբերող միջոցները, որոնք ուղղված են քարոզարշավների ֆինանսավորման եւ ծախսերի սահմանաչափերի վերաբերյալ կանոնների շրջանցումը կանխելու, փոփոխվել են՝ խրախուսելու համար ճշգրիտ հաշվապահական հաշվառումը եւ հաշվետվությունները ներկայացնելու ընդհանուր ձեւաչափերը: Ուժեղացվել է նաեւ վերահսկողությունը՝ առավել մեծ կուսակցությունների համար պարտադիր աուդիտի ներդրմամբ եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին կից մշտական Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության հիմնադրմամբ: Հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցների ցանկը համալրվել է: Պարտավորությունների կատարման երկրորդ զեկույցի ընդունմամբ ձեռնարկվել են լրացուցիչ քայլեր,որոնք ուղղված են վերահսկողության գործընթացում ներգրավված աուդիտորների անկախության ամրապնդմանը: Ավելին, «Կուսակցությունների մասին» օրենքով եւ Ընտրական օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտումների համար նախատեսվող վաղեմության ժամկետը երկարաձգվել է ողջամիտ ընդունելի չափով:

26. Վերոնշյալի համատեքստում, ԳՐԵԿՈ-ն շնորհավորում է Հայաստանին իրականացված էական բարեփոխումների կապակցությամբ, որոնք պատշաճ հասցեագրել են Երրորդ փուլի գնահատման զեկույցում նշված բոլոր տանինը առաջարկությունները: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է ընդգծել, որ որոշ միջոցառումներ են իրականացվել նոր օրենսդրության ընդունման ուղղությամբ, որոնք, անկասկած, պետք է իշխանությունների կողմից մանրամասն դիտարկվեն եւ հնարավորինս լրամշակվեն գործնականում դրանց արդյունավետ կիրառման տեսանկյունից:

27. Պարտավորությունների կատարման երկրորդ զեկույցի ընդունմամբ Հայաստանի համար <u>դադարում է</u> Երրորդ փուլի պարտավորությունների կատարման ընթացակարգը։

28. ԳՐԵԿՈ-ն Հայաստանի իշխանություններին կոչ է անում զեկույցը թարգմանել ազգային լեզվով, եւ այդ թարգմանությունը հանրության համար հասանելի դարձնել։